Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022/2023 թթ. մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստի ընտրության կարգ

1. «Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022/2023 մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում ընտրությանը կարող են մասնակցել

1. Մեդիայի ներկայացուցիչները (բացառությամբ ֆուտբոլային որևէ ակումբում աշխատող լրագրողների)
2. Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022/2023 մրցաշրջանի մասնակից ակումբները (1 ձայն):

2. Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022/2023 մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում հաղթողի կոչմանը կարող են հավակնել

Մրցաշրջանի ընթացքում Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայում առավել աչքի ընկած ֆուտբոլիստները, որոնց թեկնածությունն առաջադրվում է ՀՖՖ-ի կողմից:

3. Քվեարկողներին առաջարկվում է վերը նշված սկզբունքով կազմված ֆուտբոլիստների ցուցակը, որոնցից պետք է ընտրել լավագույն երեքին:

Ակումբների ներկայացուցիչները չեն կարող քվեարկել մրցաշրջանի ընթացքում/ տվյալ պահին իրենց ակումբը ներկայացրած/ներկայացնող թեկնածուի օգտին: Քվեարկությունը պետք է ուղարկել thebest@ffa.am էլհասցեին՝ նշելով քվեարկության տարբերակը, անուն-ազգանուն, լրատվամիջոցի անուն, կցելով լրագրողական բեյջը և լուսանկարը:

4. Միավորների հաշվառումը կատարվելու է հետևյալ կարգով. 1-ին տեղ՝ 5 միավոր, 2-րդ տեղ՝ 3 միավոր, 3-րդ տեղ՝ 1 միավոր:

5. Միավորների հաշվառումը կատարվում է ՀՖՖ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից, և արդյունքները հրապարակվում են:

6. «Fastex Հայաստանի Պրեմիեր Լիգայի 2022/2023 մրցաշրջանի լավագույն ֆուտբոլիստ» անվանակարգում առաջին երեք տեղերը զբաղեցրած ֆուտբոլիստները պարգևատրվում են հուշանվերներով և ՀՖՖ պատվոգրերով: